



**ԵՂԵԳՆԱԶՈՐԻ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ  
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՍՄԱՐԱԿԱՆ ՕՐՀՈՒՄ  
ԿԵՆՏՐՈՆԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ  
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԿԱՆ  
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**



2014 թվականին Եղեգնաձորի բնապահպանական տեղեկատվական հասարակական Օրհուս կենտրոնը (այսուհետ՝ Եղեգնաձորի Օրհուս կենտրոն) շարունակել է իր գործունեությունը՝ առաջնորդվելով Օրհուսի կոնվեցիայով (տեղեկատվության մատչելիություն, հասարակության ներգրավածություն որոշումներ կայացնելու գործընթացում և արդարադատության մատչելիություն):

Հավաստարիմ մնալով իր առաքելությանը՝ Եղեգնաձորի Օրհուս կենտրոնը հարթակ է հանդիսացել քննարկումների, քաղաքացիական նախաձեռնությունների, հանդիպումների և

ու  
Էկոլոգիական մշակույթի  
ձևավորման համար, կապող  
կամուրջ է հանդիսացել  
հասարակություն-SԻՄ  
ասպարեզում: Հենվելով  
Օրհուսի կոնվեցիայի երեք  
հիմնադրույթների վրա՝  
Եղեգնաձորի Օրհուս  
կենտրոնը նպաստել է շրջակա  
միջավայրի պահպանությանն  
ու համայնքների կայուն  
զարգացմանը:



Եղեգնաձորի Օրհուս կենտրոնի գործունեությունն ընթացել է Օրհուս կենտրոնների՝ ճանապարհային քարտեզի հիման վրա կազմված տեխնիկական առաջադրանքի համաձայն: Հաշվետու ժամանակահատվածում Եղեգնաձորի Օրհուս կենտրոնի, քաղաքացիական հասարակության, ՏԻՄ և մարզային իշխանությունների, միջազգային կազմակերպությունների հետ համագործակցությամբ կազմակերպվել են տեղեկատվության մատչելիությանը, հասարակության մասնակցությանը, արդարադատության մատչելիությանն ու Էկոլոգիային ուղղված 11 միջոցառում: Հաշվետու ժամանակահատվածում Եղեգնաձորի Օրհուս կենտրոնի և գործընկերների հետ համատեղ կազմակերպված միջոցառումներին մասնակիցների թիվը կազմել է 325 մարդ:

Եղեգնաձորի Օրհուս կենտրոնն իր մասնակցությունն է բերել մարզում, Հայաստանում ու արտերկրում կազմակերպված 7 տարբեր միջոցառումներում: Եղեգնաձորի Օրհուս կենտրոնի կողմից կազմակերպվել են առանձին հանդիպումների Վայոց ձորի մագրայետի հետ՝ մարզում առկա բնապահպանական խնդիրների վերաբերյալ համապատասխան քայլեր ձեռնարկելու նպատակով,

Մագիլի քարանձավի պաշտպանման քաղաքացիական նախաձեռնության հետ՝ քարանձավը որպես բիզնես դարձնելու ծրագրի դեմ օրենքով սահմանված կարգով համապատասխան քայլեր ձեռնարկելու նպատակով, Ազատեկի ոսկու բազմամետաղային հանքի շահագործմանը դեմ մի խումբ երիտասարդների հետ՝ նրանց իրավունքների, Օրհուսի կոնվենցիայի ու հանքերի շահագործման գործընթացի վերաբերյալ նրանց գիտելիքներն ու տեղեկացվածության մակարդակը բարձրացնելու նպատակով:



Եղեգնաձորի Օրհուս կենտրոնի կողմից ՀՀ պետական տարբեր կառույցներին ուղարկվել են տեղեկատվության ստացման 17 հատ հարցումներ, առանձանկի ուշադրություն է դարձվել մարզում գործող փոքր հիդրոէլեկտրակայանների գործունեության վերաբերյալ տեղեկատվության ստացման ու տարածման հարցում:



Եղեգնաձորի Օրհուս կենտրոնի գրադարանն ու տեխնիկական միջոցներն ինչպես միշտ հասանելի են եղել հետաքրքրվածություն ցուցաբերածների նկատմամբ: Հաշվեռու ժամանակահատվածում կենտրոնի կողմից կենտրոնի ծառայություններից օգտվել են 136 մարդ:



Համաձայն Եղեգնաձորի Օրհուս կենտրոնի համակարգողի տեխնիկական առաջադրանքի՝

- Շրջակա միջավայրի խնդիրների կամ ոլորտին առնչվող կարևոր որոշումների կայացման ընթացակարգերի վերաբերյալ կազմակերպվել են 3 մեծամաշտաբ դաընթցաներ, որոնց մասնակիցներ ընդհանուր թիվը կազմել 182 հոգի:
- Եղեգնաձորի Օրհուս կենտրոնի կողմից սոցիալական ցանցերի ու էլեկտրոնային լրատվության միջոցով մշտապես ներկայացվել է Հայաստանում և մասնավորապես մարզում առկա բնապահպանական արդյունավետ կառավարման լավագույն փորձը, կառավարման մարմինների և հասարակության փոխհամագործակցության լավագույն օրինակները և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների միջև համագործակցության արդյունավետ միջոցները և մեխանիզմները:
- ՀԿ-ների ներկայացուցիչների, ուսանողների, երիտասարդների, ուսուցիչների ներգրավմամբ, մարզում առկա շրջակա միջավայրի հիմնախնդիրների, ինչպես

- նաև Օրիոսի Կոնվենցիայով երաշխավորված իրավունքների իրականացման վերաբերյալ կազմակերպվել են էկոկրթական դասընթացներ:
- Տեղեկատվական տարբեր միջոցներով և եղանակներով՝ կայք-էջեր, տեղեկագրեր, տեղեկատվական ստեղծեր, հոդվածներ և այլն, Եղեգնաձորի Օրիոս կենտրոնն աջակցել է առկա բնապահպանական տեղեկատվության տարածմանը և հանրության լայն շրջանների իրազեկության մակարդակի բարձրացմանը՝ նպաստելով բնապահպանական տեղեկատվության հասանելիությանն ու մատչելիությանը (օգտագործելով [www.aarhus.am](http://www.aarhus.am) կայքի, տեղական էլեկտրոնային ցանցերի և տարբեր ՁԼՄ-ների ընձեռած հնարավորությունները):
- Հանրության համար կարևոր բնապահպանական հարցերի շուրջ բնապահպանական տեղեկատվություն տնօրինող աղբյուրներին ուղարկվել են տեղեկատվության ստացման հարցումներ և տարածվել են դրանք հասրակության շրջանում: Համապատասխան մարմիններին ներկայացվել են առաջարկություններ առկա հիմնախնդիրների լուծման և կանխարգելման ուղղություններով:
- Եղեգնաձորի Օրիոս կենտրոնն իր մասնակցությունն է ունեցել մարզում կազմակերպված հասարակական լսումներին, որոնց վերաբերյալ համապատասխան տեղեկավորությունը տեղադրված է [www.aarhus.am](http://www.aarhus.am) կայքում: Կենտրոնը խթանել է ազդակիր համայնքների բնակչության մասնակցությանը հանրային լսումներին, ըստ անհրաժեշտության հասարակայնության համար անցկացրել է խորհրդատվական հանդիպումներ:

Ֆինանսական միջոցների բացակայության պատճառով Եղեգնաձորի Օրիոս կենտրոնի կողմից տեխնիկական հանձանարականի որոշ կետեր չեն իրականացվել, որոնց վերաբերյալ ամեն եռամսյակը մեկ կազմվել է տեխնիկական հանձանարարականների կատարողական և ներկայացվել է համապատասխան մարմիններին:



Հաշվետու ժամանակահատվածում Եղեգնաձորի օրհուս կենտրոնը շարունակել է համագործակցությունը նախորդ տարիներից ձեռք բերած կառույցների հետ ( Վայքի քաղաքացիական կենտրոն, Ջերմուկի զարգացման կենտրոն ՀԿ, Սյունիք Զարգացում ՀԿ, ԱՄՆ Խաղաղության կորպուս, Ասիական զարգացման բանկ, Վայոց ձորի Մարզպետարանա և այլն) և ստեղծել է նոր համագործակցություն Վայոց ձորի մարզային զարգացման ու համագործակցության կենտրոնի հետ, ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակի հետ, Հայաստանում Ամերիկյան Համալսարանի «Հակոբյան» բնապահպանական կենտրոնի հետ: Կենտրոնի գրադարանն ու տեսադարանը համալրվել են նոր գրքերով ու դիտակտիկ նյութերով: Եղեգնաձորի Օրհուս կենտրոնը համալրվել է նոր կամավորներով, տեղական ու միջազգային փոխանակման ծրագրերի իրականացման արդյունքում զարգացել են կամավորների հմտություններն ու կարողությունները: Կենտրոնն ակտիվ մասնակցություն է ունեցել ՀՀ կառավարությանը, ՀՀ Ազգայի ժողովին ու միջազգային այլ կազմակերպություններին շրջակա միջավայրի պահպանմանն ու Օրհուսի կոնվենցիայի իրականացմանը նպաստող առաջարկությունների փաթեթների կազմման, օերնադրական փոփոխությունների նախապատրաստման, Սահմանադրական բարեփոխումներին ընդառաջ կարծիքների արտահայտման գործում:



Եղեգնաձորի Օրհուս կենտրոնի գործունեության մանրամասն հաշվետվությունն ըստ օրերի, ամսիների կարող եք տեսնել կենտրոնի կողմից ներկայացված վիճակագրական հաշվետվության մեջ: Ինչպես նաև [www.aarhus.am](http://www.aarhus.am) կայքում կարող եք գտնել կենտրոնի կողմից պատրաստաված հոդվածներ ու այլ նյութեր: